

1848-1850ԹԹ. ՀՈՒՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ
ԱՐՁԱԳԱՆՔՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒՆՈՒՄ*

ՀՏՂ 94(495)+070

Ֆելիքս Մովսիսյան

պ.գ.դ., պրոֆեսոր

ՎՊՀ Պատմության ամբիոնի վարիչ

Վանաձոր, Հայաստանի Հանրապետություն

felmov@mail.ru

1821-1829թթ. հունական ազգային-ազատագրական պայքարի արդյունքում հույներն անկախություն ստացան: Եվրոպական մեծ տերությունների աջակցությամբ ստեղծվեց Հունական թագավորություն, որն ընդգրկեց հունական պատմական տարածքի միայն մեկ երրորդը: Չնայած դրան՝ հույները չդադարեցրեցին ազգային շարժումը միասնական ազատ ու անկախ հայրենիք ունենալու համար: 1840-ական թվականներին հույների շրջանում բավական կենսունակ էր «Մեծ Հունաստանի» գաղափարը, որի իրականացման համար պայքարում էին հայրենասիրական և գաղտնի ընկերությունները: 1848թ. փետրվարի ֆրանսիական հեղափոխության հաղթանակի ազդեցության տակ հույներն ապստամբություն բարձրացրեցին, որը նկատելի արժագանք է գտել ժամանակի հայ պարբերական մամուլում: Հույների պայքարին անդրադարձել են հիմնականում հայ հասարակական մտքի ազգային-պահպանողական հոսանքի պարբերականները:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթ «Հայաստանը» և զմյուռնահայ «Արշալույս արարատյանը» թուրքական գրաքննության պայմաններում ազատ ու անկաշկանդ չեն անդրադառնում հույների ազատագրական պայքարին, որն ուղղված էր Օսմանյան կայսրության դեմ: Այս պարբերականները թուրքամետ դիրքերից են ներկայացնում հույների ազգային շարժումը: «Հայաստանն» այն համարում է Հունաստանի և Թուրքիայի միջև «վեճ», իսկ հունական խորհրդարանում հնչած պայքարի կոչերը՝ «անիրավություն և հիմարություն»: Թերթի կարծիքով հույները «հիմար են», որովհետև չեն մտածում պատերազմի ծանր հետևանքների մասին և խորհուրդ է տալիս մտածել երկիրը հարստացնելու մասին:

«Արշալույս արարատյանը» Հունաստանն անվանում է «դժբախտ երկիր», որտեղ տիրում է երկպառակություն և անմիաբանություն, որի պատճառով հույները չեն առաջադիմում և նրանց վիճակն օրեցօր վատթարանում է:

Վիեննայի Մխիթարյան միաբանության «Եվրոպա» շաբաթաթերթը հունական պայքարը ներկայացնում է հիմնականում անկողմնակալ դիրքերից: Թերթն ընդգծում է, որ հույն ապստամբների կարգախոսն է «Ազատություն և Հունաստանի հետ միավորում», բայց նրանց պայքարը չի դրվատնում:

* Հոդվածը ներկայացվել է 18.03.2022:

Տպագրության է երաշխավորել Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնը: 25.03.2022:

Հոդվածը տպագրության է ընդունվել 25.03.2022:

Բանալի բառեր՝ հույներ, ազգային պայքար, անկախություն, Մեծ Հունաստան, հայ մամուլ, «Հայաստան», «Արշալույս արարատյան», «Եվրոպա»:

Ներածություն

Օսմանյան կայսրության դեմ հույն ժողովրդի 1821-1829 թթ. ազատագրական պայքարն ավարտվեց 1829թ. սեպտեմբերի Ադրիանապոլսի պայմանագրով, որով Հունաստանը փաստացի գրեթե լիակատար անկախություն ստացավ¹: Հունաստանի անկախությունը ձանաչեցին նաև եվրոպական մեծ տերությունները, որոնք 1830թ. փետրվարի 3-ին Լոնդոնում այդ մասին արձանագրություն ստորագրեցին: Նոր ծնալիքոված հունական պետության կազմում մտան միայն Կենտրոնական Հունաստանը, Պելոպոնեսը և Էգեյան ծովի որոշ կղզիներ: Հույն ժողովրդի երեք քառորդը մնաց Օսմանյան կայսրության կազմում, իսկ հույներով բնակեցված Հոնիական կղզիները 1815թ. Փարիզի պայմանագրով գտնվում էին Անգլիայի գերիշխանության տակ: Նորաստեղծ հունական պետությունը եվրոպական մեծ պետությունների կամքով դարձավ միապետություն, որի գահը 1832թ. մայիսի 7-ին Անգլիայի պահանջով անցավ Բավարիայի Կիտելսբախ արքայատոհմի ներկայացուցիչ արքայազն Օտտոնին²:

1840-ական թթ. հույն ժողովրդի շրջանում բավական կենսունակ էր «Մեծ Հունաստանի» գաղափարը, որը նախատեսում էր հասնել լիակատար անկախության, համախմբել հունական բոլոր հողերը, մայրաքաղաքը տեղափոխել Կոստանդնուպոլիս և այնտեղից դուրս մղել թուրքերին: 1843թ. սեպտեմբերի 13-15-ին Աթենքում տեղի ունեցավ անարյուն հեղաշրջում և Օտտոն Ի-ը հարկադրված եղավ բավարարել ապստամբական շարժման մասնակիցների պահանջը: Նա հրավիրեց հունական ազգային ժողով, որը 1844թ. մարտին մշակեց սահմանադրություն: Հունաստանը դարձավ սահմանադրական միապետություն, ծնալիքովեց կառավարություն, ընտրվեց Սենատ և պատգամավորների պալատ: Կառավարության ղեկավար, 1821-1829թթ. ազատագրական պայքարի մասնակից Իոաննիս Կոլետտիսը մինչև 1847թ. երկիրը կառավարում էր անվերահսկելիորեն: Առաջ քաշելով «Մեծ Հունաստանի» ծրագիրը և ընդգծելով նրա «անկախությունը»՝ ֆրանսիական կողմնորոշում ունեցող Ի. Կոլետտիսը մշտական հակասության մեջ էր անգլիական դեսպանորդ Էդմունդ Լայոնսի հետ, որը Հունաստանը դիտում էր որպես անգլիական գաղութ: Ի. Կոլետտիսին պաշտոնանկ անելու նպատակով անգլիացիները 1846-1847թթ. նրա դեմ ապստամբություն հրահրեցին Ախեայում, Մեսսինայում և Եվբեայում³:

1840-ական թվականների հունական պայքարը

1848թ. փետրվարի ֆրանսիական հեղափոխության հաղթանակը և դրա ազդեցության տակ եվրոպական բազմաթիվ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ալիքը Հունաստանում ոգևորության վերելք առաջ բերեց: Ուժեղացան հանրապե-

¹ St`u Адрианопольский мирный договор 1829. - Военная энциклопедия, т. 1, М., 1997, с. 93; Советская историческая энциклопедия, т. 1, М., 1961, с.219-220.

² St`u Шпаро О. Б. Освобождение Греции и Россия. М. 1965, с. 272-275; Мисюревнч О. Е. Становление национального государства в Греции: «русская партия» в 1837-1844. М., 1977, с. 44.

³ История XIX века. Под ред. Лависса и Рамбо, т. 5, М., 1938, с. 237.

տական տրամադրություններն ուսանողության և սպայության մի մասի շրջանում: Աթենքում տեղի ունեցան բազմամարդ հավաքներ, իսկ Հունաստանի տարբեր վայրերում բռնկվեցին ապստամբություններ, որոնց մասնակիցները պահանջում էին կառավարության հրաժարականը և առաջ էին քաշում ազգային միավորման խնդիրը: Թեսալիայում, որն այդ ժամանակ գտնվում էր Թուրքիայի կազմում, հավաքվեցին 1847 թ. ապստամբության մասնակիցները և ազգային համախմբման կարգախոսով 1848թ. մարտին ներխուժեցին Հունաստան: Այստեղ նրանք համընդհանուր աջակցություն ստացան: Հույն ապստամբները հասան մինչև Ֆոկիո և Եվբեա կղզի, որտեղ նրանց հաջողություններն ավարտվեցին: Թուրքական զորքերը հարձակվեցին նրանց վրա ու ցրեցին: Ապստամբություններ տեղի ունեցան նաև Էպիրում, Մակեդոնիայում և Կրետե կղզում: Հունական ազատագրական պայքարը, ի տարբերություն մյուս երկրների շարժումների, անհամեմատ փոքր ընդգրկում ունեցավ, քանի որ պայքարի առանցքում ընկած Սահմանադրական հարցը Հունաստանում վճռվել էր դեռևս 1843թ. շարժման ժամանակ¹:

Արևմտահայ պարբերական մամուլը 1848-1849 թթ. հանգամանորեն լուսաբանում էր եվրոպական գլխավոր երկրներում տեղի ունեցող հեղափոխական, ինչպես նաև՝ ազգային-ազատագրական շարժումները և հիմնական ուշադրությունը դարձնում էր դրանց վրա: Հույների ազգային պայքարի մասին արևմտահայ ազգային-պահպանողական հոսանքի պարբերականները մանրամասնություններ չեն պատմում և բավարարվում են իրենց հասած լրատվությունը վերարտադրելով: Չնայած դրան՝ արևմտահայ մամուլի դեպքից-դեպք հրապարակումները կարևոր են հայ հասարակական մտքի պատմության համար: Դրանք ուշագրավ են ամենից առաջ նրանով, որ հստակ դիրքորոշում են պարունակում: Դա վերաբերվում է առաջին հերթին թուրքահայ պարբերականներին, որոնք թուրքական գրաքննության պայմաններում առանձնապես ջանք չեն թափում ներկայացնել Օսմանյան կայսրության դեմ ուղղված հույների պայքարը: Այսպես, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթ «Հայաստանը» 1848թ. մարտին բռնկված ապստամբության մասին մանրամասներ չի պատմում և գերադասում է ներկայացնել Թուրքիայի և Հունաստանի միջև տեղի ունեցած «վեճը»: Ըստ թերթի՝ այն Ռուսաց կայսրի «միջնորդութեամբը արդարութեամբ և անաչառութեամբ լրմննալուն պես վեհափառ սուլթանն» իր ձեռքով հատուկ շնորհակալական նամակ գրեց և ռուսաց դեսպան Պավել Դիդոլի միջոցով ուղարկեց Նիկոլայ I կայսրին»²:

Հայաստան թերթի խմբագիր, արևմտահայ ազգային-պահպանողական հոսանքի պարագլուխ, հրապարակախոս Հովհաննես Չամուռճյան Տերոյենցը «Օսմանեան մեծագոր տերութեան»³ ջատագովներից էր և թուրքամետ դիրքերից է դիտարկում կայսրության կազմում ճնշվող ժողովուրդների ազգային շարժումները, որոնք չէր դրվատում: Նա հեղափոխական և ազատագրական պայքարի ելած մարդկանց անվանում էր «խռովարարներ», իսկ ժողովրդին՝ անկառավարելի զանգված և «հովե քշուած փետուր մը»⁴: Այս մոտեցմամբ նրա խմբագրած «Հայաստանը» ներկայացնում է հույների անկախության համար պայքարը, որն իր համար ընդհամենը «վեճ» էր:

¹ Международные отношения на Балканах 1830-1856 гг. Отв. Ред. В. Н. Виноградов, М., 1990, с. 243.

² «Հայաստան», Կ. Պոլիս, 1848, 27 մարտի:

³ «Հայաստան», 1846, 12 հունիսի, թիվ 1:

⁴ «Հայաստան», 1847, թիվ 107:

Մարտյան ապստամբության պարտությամբ հունական ազգային շարժումն անկում չապրեց և նոր թափ ստացավ 1848թ. ապրիլի կեսերին, երբ ապստամբություններ բռնկվեցին Կորնթոսի գավառում, Կալիմատի կայազորում, ինչպես նաև՝ Նավպակտոտում, Էլիդում և Նավպլինում։ Այս ապստամբությունները գլխավորում էին սպաները, որոնք չէին պահանջում Օտտոն թագավորի գահընկեցությունը, այլ ձգտում էին հասնել սահմանադրության հստակ կիրառմանը և հակազգային պետական խորհրդի ցրմանը։ Ապստամբների շրջանում կային նաև Ազգային ժողովի հրավիրման կողմակիցներ։ 1848թ. ապրիլի օրերին Հունաստանում նորից առաջ եկան կիսալեզալ կազմակերպություններ, որոնք կապեր հաստատեցին Թուրքիայի տիրապետության տակ գտնվող իրենց հայրենակիցների հետ և պատրաստ էին ցանկացած բարենպաստ պահի ելույթ ունենալ¹։

Արևմտահայ պարբերականները լռության են մատնում նաև Թուրքիայի դեմ ուղղված հույների այս ապստամբությունը։ Զմյուռնիայում լույս տեսնող «Արշալույս արարատյանը» և «Հայաստանը» նախընտրում են պատմել Հունաստանում Թուրքիայի նորանշանակ դեսպան Կոնստանտինոս Մուզուրուսի հիվանդանալու, ապաքինվելու, 1848թ. փետրվարին Աթենք ժամանելու և Օտտոն թագավորի կողմից հարգալից ընդունելության արժանանալու մասին։

«Արշալույս արարատյանի» խմբագիր Ղուկաս Պալոպապոյանը թերթը լույս ընծայելու «օրէն ի վեր յուր սկզբունքը չէր փոխած երբեք»² ճնշվող ժողովուրդների պայքարի նկատմամբ։ Նա երկակի դիրքորոշում ուներ այդ հարցում. մի կողմից համակրանք էր դրսևորում ավստրիական տիրապետության դեմ պայքարող հունգարների, իտալացիների նկատմամբ, մյուս կողմից չէր ջատագովում Օսմանյան տերության դեմ ուղղված ժողովուրդների շարժումը։

Անտեսելով հույների մարտ-ապրիլի ապստամբությունները՝ «Արշալույս արարատյանը» 1848 մայիսին ընդգծում է Հունաստանում բավականին խառնակ վիճակ ստեղծվելը։ Թերթի բնութագրմամբ՝ «քաղաքական պատերազմը առաջանալու վրա է, ամեն կողմն ապստամբութեան լուրեր կուգան անպակաս և ժողովուրդը գոհ չլինելով կառավարութեան ընթացքին՝ ապստամբոց հետ կմիաբանին»։ Այս ամենին ավելացավ մի «ցավալի դիպուած», որին շատերը «քաղաքական պատճառ կուտան»։ Մայիսի 5-ի կեսօրին, Օսմանյան կայսրության դեսպանատան աշխատակից, ազգությամբ հույն Ապոստոլ Նադիրը մի պատրվակով մտավ Կ. Մուզուրուսի աշխատասենյակն ու հրացանից կրակ բացեց նրա վրա, որը «բարեբախտաբար» միայն թեթև վերք ստացավ։ «Այս եռեղնագործը» փախչելու ժամանակ ձեռքակալվեց ու բանտարկվեց³։

Թերթը հավաստի տեղեկություն է տալիս Կ. Մուզուրուսի վրա կատարված մահափորձի մասին, որը մեծ արձագանք գտավ ու բարդացրեց Հունաստանի միջազգային դրությունը։ Աթենքի «Զեֆիրոս» թերթը հունիսի 12-ի համարում գրում էր, որ Հունաստանի խորհրդարանը որոշում կայացրեց Ապոստոլ Նադիրին Օսմանյան կայսրությանը չհանձնելու մասին։ Այս որոշումը, թերթի կարծիքով, կարող է հանգեցնել այն հետևության, որ Թուրքիան իր հերթին հանցանք կատարած հույներին հարկադրված կլինի

¹ Революции 1848-1849. Под ред. Ф. А. Потемкина и А. Л. Молока, М., 1952, том II, 375-376.

² «Արշալույս արարատյան», Զմյուռնիա, 1878, թիվ 1093։

³ «Արշալույս արարատյան», 1848, 14 մայիսի, թիվ 311։

դատապարտել իր երկրի օրենքներով:

«Արշալույս արարատյանն» այնուհետև պատմում է Հունաստանում ամռանը բռնկված ապստամբության մասին: Թերթի լրատվությամբ՝ 300-400 ապստամբներ Պապակոստայի և Քոնստյանոսի գլխավորությամբ ըմբոստացել են Թուրքիայի սահմանագլխին, բայց, չկարողանալով դիմադրություն ցույց տալ կառավարական զորքերին, ցրվել են շրջակա բնակավայրերը: Այստեղ նրանք զբաղված են գողություններ, մարդասպանություններ և այսօրինակ այլ «եղեռնագործություններ» կատարելով: Հունական լրագրերի նյութերով թերթը հայտնում է, որ կառավարական զորքը, ապստամբներին հետապնդելով, «մեծ անկարգություններ» է գործում խաղաղ բնակչության նկատմամբ: Հույն ապստամբ Մամուրի գլխավորած զորամասերի իրականացրած «հափշտակությունների և հարստահարությունների» պատճառով մեծ վախ է տիրում Ֆոփսոփտա նահանգում: Տեղի բնակչությունը միաժամանակ վախ է ապրում ապստամբների կրկին հայտնվելու սպառնալիքից: Լամիի բնակիչներն, ավելի շատ վախենալով կառավարական զորքերից, քան՝ ապստամբներից, իրենց ընտանիքներն ու շարժական գույքը տեղափոխեցին Սթիլիտայի նավահանգիստը, որպեսզի այնտեղից էլ փոխադրվեն Գալսիտա¹:

Հունիս-հուլիսին Հունաստանում վիճակն էապես չփոխվեց, ինչն «Արշալույս արարատյանը» հաստատում է հետագա լրատվությունում: Թերթը տեղեկացնում է Հունաստանի խորհրդարանի գործունեությունից դժգոհությունների աճի մասին, որն ամենևին չի մտածում «ազգասիրական գործ առաջ տանելու» ուղղությամբ և շարունակում է նախորդ խորհրդարանի քաղաքականությունը: Թերթի դիտարկմամբ՝ ինչպես երևում է, խորհրդարանը բնավ չի ցանկանում լսել Հունաստանի բարեկամ պետությունների պատգամավորների խորհուրդը, որոնք հորդորում են Կ. Մուզուրուսի վրա մահափորձ կատարած հույն Ապոստոլ Նադիրին հանձնել Օսմանյան կայսրությանը: «Արշալույս արարատյանի» պատմելով՝ Կ. Մուզուրուսի միջնորդության շնորհիվ պաշտոնանկ է արվել ֆինանսների նախարար Դիսամենոն: Նա սահմանամերձ վայրերում ապրող քրիստոնյաներին Թուրքիայի դեմ ապստամբության կոչեր էր անում: Այդ մասին նրա նամակներից մեկն ընկավ Կ. Մուզուրուսի ձեռքը, որն այն հանձնեց Հունաստանի կառավարությանը: Վերջինս չցանկանա՞ցավ բարդացնել հարաբերությունները Թուրքիայի հետ և նախարարին պաշտոնանկ արեց²:

1848թ. սեպտեմբերի 14-ին ապստամբություն բարձրացրեց Աթենքի կայազորը: Ապստամբները թագավորից պահանջում էին պաշտոնանկ անել բավարացի նախարարներին, ցրել բավարական զորքը և հռչակել առավել ժողովրդավարական սահմանադրություն: Անդրադառնալով այս ամենին՝ «Արշալույս արարատյանը» ենթադրում է, որ կառավարությունը մոտ օրերս փոփոխության կենթարկվի, քանզի նրա անդամների մեծ մասի շրջանում «անհամաձայնություն» կա: Հունական լրագրերը դժգոհում են, որ թագավորն ու իր պալատականները երկրի երևելի քաղաքական գործիչներին տարբեր ձանապարհով իրենց կողմն են գրավում և բոլոր գործերը կարգավորում իրենց ուզածի պես: Բացի այդ, պատգամավորների մեծագույն մասը թագավորի կողմակիցն է, որն ավելի է հեշտացնում նրա խնդիրը երկրի կառավարման հարցում: Ելնելով այս ա-

¹ «Արշալույս արարատյան», 1848, 25 հունիսի, թիվ 314:

² «Արշալույս արարատյան», 1848, 6 օգոստոսի, թիվ 317:

մենից՝ «Արշալույս արարատյանը» եզրակացնում է. «Հունաստանը առաջադիմելու համար կարևոր է իր երևելի քաղաքացիոց միաբան և ազդու գործակցությունը, բայց ասոր հակառակ կտեսնենք թե երկպառակտությունը ժամանակե ի վեր բոլորովին կտիրե այս դժբաղդ երկրին մեջ, որուն զարգացման ամեն կերպ միջոցները բնականապես օրըստօրե նվազելու վրա են»¹:

«Արշալույս արարատյանը» 1849թ. սկզբին Հունաստանում տիրող քաղաքական վիճակը կրկին գնահատում է «տրտմալի», քանզի Աթենքի լրագրերը «ցավալի» լուրեր էին հայտնում մայրաքաղաքում տիրող գողությունների, ավազակությունների և մարդասպանությունների մասին: Թերթը շարունակում է պնդել, որ այս ամենի պատճառը քաղաքական երևելի անձանց շրջանում առկա «անմիաբանությունն» է, որի «պատճառով Հունաստանը՝ փոխանակ առաջադիմելու, օրըստօրե ետ կերթա»²:

Հունաստանի կառավարության և ազգային ժողովի միջև շարունակվող «անմիաբանությանը» թերթն անդրադառնում է նաև 1849 թ. նոյեմբերի 11-ի համարում: Այս հակասության մեջ թերթը նախապատվությունը բացահայտ տալիս է ազգային ժողովին՝ համարելով նրան իրավացի և մեղադրում է կառավարությանը, որի անոգամների մեծ մասը «շահասիրությամբ և կողմնասիրությամբ վարակեալ է»:

«Արշալույս արարատյանն» իրավացի է այնքանով, որ Հունաստանում, իսկապես, անկայուն վիճակ էր տիրում և, թեև, 1848-1849թթ. Օստոն թագավորը փոխեց կառավարության կազմը, բավարացիները հեռացվեցին, բայց Հունաստանի կախվածությունն օտարերկրյա պետություններից առաջվա պես մնաց: Թեսալիայի, Էպիրի, Կրետեի և այլ շրջանների հույները, չհամակերպվելով իրենց վիճակի հետ, հետագայում էլ շարունակեցին պայքարը թուրքական բռնապետության դեմ: Թեպետ այդ պայքարը հաղթական վախճան չունեցավ, բայց և այնպես չընկճեց հույների ազատատենչությունը: Նրանք պատրաստ էին անգամ օգնության գնալ իրենց ազատության համար մարտնչող հռոմեացիներին:

Այս մասին պատմում է Վիեննայի Մխիթարյան միաբանության «Եվրոպա» քաղաքական շաբաթաթերթը, որի ունեցած լուրերի համաձայն՝ Հռոմի հանրապետության ռազմական նախարար Պիետրո դի Կամպելլոն կառավարությանը հայտնել է, որ չորս հազար հույն լեռնականներ՝ զինված որսորդական հրացաններով, Եպիրոսից պատրաստ են ցանկացած պահի գալ և իրենց ծառայությունը մատուցել Հռոմի հանրապետությանը³:

Ի տարբերություն թուրքահայ պարբերականների՝ «Եվրոպան» հունական պայքարը լուսաբանում է անկողմնակալ դիրքերից: Ստանձնելով թերթի հրապարակումը՝ Մխիթարյան միաբաններն իրենց ընթերցողներին խոստացել էին «հիմիկվան Եվրոպայի խռովութիւնները իրենց բնական՝ աղէկ կամ գէշ գունովը նկարել, որ ընթերցողները աղէկը տեսնեն ու հետևին, գէշն իմանան ու փախչին»⁴: Հավատարիմ մնալով այս սկզբունքին՝ «Եվրոպան» հետագայում այս մոտեցմամբ է լուսաբանում հույների պայքարը:

«Հայաստանը» արևմտահայ եզակի պարբերականներից է, որը բացահայտ հան-

¹ «Արշալույս արարատյան», 1848, 17 սեպտեմբերի, թիվ 320:

² «Արշալույս արարատյան», 1849, 4 մարտի, թիվ 332:

³ «Եվրոպա», Վիեննա, 1849, 20 մարտի, թիվ 12, էջ 47:

⁴ «Եվրոպա», 1848, 27 հունիսի, թիվ 26, էջ 112:

դես գալով թուրքամետ դիրքերից, հանդիմանում է հույների պայքարն ընդդեմ Թուրքիայի: Թերթը, պատմելով Բոսնիայում Թահիր փաշայի կողմից 5 հազար հույների իր ենթակայության տակ հավաքելու մասին, եզրակացնում է. «Կտեսնենք, որ նույնիսկ հույներն, անգամ հելլենական կառավարությունից գոհ չլինելով, անոր դեմ պատերազմելու հոժարություն ունին, քան թե անոր պաշտպանության ներքևը մտնելու»¹: Ավելի ուշ՝ 1849 թ. օգոստոսին, երբ հույների պայքարը վաղուց պարտություն էր կրել, «Հայաստանն» անդրադառնում է Հունաստանի խորհրդարանում կայացած քննարկումներին: Առանց լրատվության աղբյուրը նշելու, թերթը գրում է, որ պատգամավորներից ումանք հանդես են եկել Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու կոչերով: Պատճառը, «Հայաստանի» համոզմամբ, կայանում է հետևյալում. թուրքական կառավարությունը հաշվի առնելով, որ Խուրուջեշմեի հունական դպրոցի շրջանավարտներն ու աշակերտները հանդես են եկել Թուրքիայի դեմ ապստամբության օգտին, որոշել է այսուհետև արգելել հունահպատակ ուսուցիչների աշխատանքը դպրոցում: Ըստ թերթի՝ այս ուսուցիչները, փոխանակ իրենց գիտելիքներն աշակերտներին հաղորդելու, «կաշխատեն եղեր անոնց սրտին մեջ ատելություն խոթել Օսմանյան տերության դեմ, անհնազանդություն քարոզել, վերջապես ինչ որ հպատակության դեմ է, անոնք սորվեցունել, ինչպես որ արդեն պտուղն ալ տեսնվեցավ»²:

Թերթը զարմանք է արտահայտում, որ այս մասին իրազեկ հույն պատգամավորները խորհրդարանում «առաջարկում են»՝ պատերազմ ընդդեմ Թուրքիայի: «Հայաստանի» խորին համոզմամբ՝ հույներն այս կոչերով «իրենց անիրավությունը և հիմարությունը հայտնաժ Կրլլան», քանի որ Օսմանյան կայսրության դպրոցներում մարդիկ ազատ են իրենց ուզածը սովորելու հարցում: Բայց, որովհետև դրա փոխարեն «իշխանութեան դեմ ապստամբութեան դասեր կտրվեն դպրոցականաց», ուստի կառավարությունը «պարտավոր է այն ատենը ասոր դեմ զգուշավոր միջոցներ բանեցունել, որչափ որ խստութեամբ կրնա ըլլար»³:

Թերթի կարծիքով՝ հույները «հիմար են», որովհետև չեն մտածում պատերազմի հետևանքների մասին: Նախ՝ նրանց ֆինանսական միջոցները թույլ չեն տա պատերազմ վարել, որովհետև երկրի եկամուտները ծախսերին չեն բավարարում և օրեցօր աղքատությունը շատանում է: Բացի այդ, պատերազմի դեպքում եվրոպական պետություններից ոչ մեկը Հունաստանին զումար չի տա, քանի որ ներկայումս նրանցից յուրաքանչյուրը դրամի կարիք ունի: Եվ վերջապես, եվրոպական բոլոր պետությունները Թուրքիայի «ամբողջությունը կցանկանան», ուստի Հունաստանին չեն օգնի: Սրանից չի հետևում, թե «Հայաստանը» հույների ազատության համար պայքարը չի դրվատում, որովհետև համոզված է նրա անհեռանկարայնությունում, կամ էլ նրանց պարտությունը չի ցանկանում: «Հայաստանը» հույներին խորհուրդ է տալիս ավելի շատ աշխատասիրություն դրսևորել ու մտածել երկիրը շենացնելու մասին: Թերթը գրում է. «Հելլենացիք առավել իմաստուն կվարվեն, երբոր ուրիշեն տեղ առնելով երկիրնին հարստացնելու ջանք ընելուն տեղը, ծեռքներնին եղած երկիրը ըստ արժանվոյն մշա-

¹ «Հայաստան», 1849, 19 մարտի:

² «Հայաստան», 1849, 13 օգոստոսի:

³ Նույն տեղում:

կելով հարստացնելու ջանք անեին ու գոհ ըլլային»¹:

Օսմանյան կայսրության դեմ հույներն ապստամբեցին նաև 1850թ. Սամսո կղզում: Ապրիլին այստեղից ստացված լուրերով «Եվրոպան» հայտնում է, որ կղզում «խաղաղությունն ու հանդարտությունը նորեն հաստատվել է ու ապստամբները առանց մեկ պայմանի հնազանդվել են»²:

Արևմտահայ պարբերականները համեմատաբար ավելի շատ լուրեր են տալիս անգլիական իշխանությունների դեմ հույների մղած պայքարի մասին: Անգլիայի ենթակայության տակ գտնվող Հոնիական կղզիները, որ պաշտոնապես կոչվում էին «Յոթ կղզիների Միացյալ նահանգներ», ձևականորեն համարվում էին ինքնավար պետական միավորում: Յուրաքանչյուր կղզի ձևականորեն ղեկավարում էր գույքային բարձր ցենզի հիման վրա ընտրված ներկայացուցչական մարմինը, որն ուներ իր դատարաններն ու վարչակազմը: Գլխավոր կղզի Կորֆուն ընտրում էր վճռական ծայն չունեցող ներկայացուցիչների պալատ և սենատ: Փաստացի ամբողջ իշխանությունը պատկանում էր Կորֆուի անգլիական գերագույն կոմիսարին և մյուս կղզիներում գտնվող նրան ենթակա կոմիսարներին: Հոնիական կղզիներում հասարակական և մշակութային կյանքը բավականաչափ զարգացած էր: Այստեղ գործում էին ուսումնական հաստատություններ, լույս էին տեսնում թերթեր, հանդես եկան քաղաքական ակումբներ: Կղզիների վարչակազմը հենվում էր անգլիական ռազմական ուժի վրա և գտնվում էր անգլիական իշխանությունների ձեռքում: Հույների պայքարն անգլիական իշխանությունների դեմ նպատակ էր հետապնդում ձեռք բերել լիակատար ինքնուրույնություն և միանալ Հունաստանին: Պայքարի առաջամարտիկները բուրժուական մտավորականությունն ու երիտասարդությունն էր, որոնցից ոմանք կրթություն էին ստացել Փարիզում, մասնակցել 1830թ. հուլիսյան հեղափոխությանը, և վերադառնալով հայրենիք, անդամագրվել անգլիական բռնապետության դեմ մարտնչող հայրենասերների ճամբարին: Նրանց ոգևորում և ուժ էր տալիս բանաստեղծ, նոր հունական լիրիկայի խոշոր ներկայացուցիչ Դիոնիս Սոլոմոսի «Ազատության օրհներգը»: Ազգային-ազատագրական շարժման փորձերը Կորֆու կղզում կանխվում էին անգլիական կոմիսար բարոն Հովարդ Դուգլասի կողմից: Անգլիայի համար Հոնիական կղզիները կարևոր էին նրանով, որ այստեղ էր գտնվում նրա ռազմածովային խոշոր բազան³:

Հունաստանում 1843 թ. տեղի ունեցած հեղաշրջումն ընդդիմադիր ելույթներ առաջ բերեց Հոնիական կղզիներում: Այստեղ Անգլիայի ներկայացուցիչ Հ. Դուգլասին փոխարինած Ջ. Սիթոնը հարկադրված եղավ զիջումներ անել հույներին և առաջ քաշեց բարեփոխումների ծրագիր, որը նպատակ էր հետապնդում բավարարել բուժուագիայի շահերը և թեթևացնել աշխատավորության վիճակը: 1848թ. իրադարձություններն ակտիվացրին Կորֆուի լիբերալ ընդդիմությանը, որը փորձեց Ջ. Սիթոնի հետ համաձայնության գալով հասնել մի շարք բարեփոխումների: Նրան աջակցում էին չափավոր ընդդիմադիր գործիչներ բանաստեղծ Տիպալոսը, իրավաբան Զամպելիսը և ուրիշներ: Ջ. Սիթոնի պատվին «Գրականության բարեկամներ» ակումբում խնջույք տրվեց, որին դեմ դուրս եկած ժողովուրդը պահանջում էր կղզին միացնել Հունաստա-

¹ Նույն տեղում:

² «Եվրոպա», 1850, 21 մայիսի, թիվ 21, էջ 82:

³ Революции 1848-1849, том II, стр. 376; Международные отношения на Балканах 1830-1856 гг., стр. 243:

նին: Կորֆուի ժողովուրդը կտրուկ հանդես եկավ Զ. Սիթոնի հետ համաձայնության գալու դեմ, ով հաշվի առնելով հույների ընթուստ տրամադրությունները, զնաց նոր զիջումների: Նա թեթևացրեց հարկերը, ընդլայնեց Կորֆուի կենտրոնական պալատի քաղաքական և ֆինանսական իրավունքները, վերացրեց մամուլի ազատության որոշ սահմանափակումները: Այս զիջումներից հետո Կորֆուում դադարեցին ժողովրդական ելույթները:

Այլ կերպ ընթացան իրադարձությունները Կեֆալոնիայում, որտեղ ժողովրդական ապստամբությունները գլխավորեց դեմոկրատական մտավորականությունը: Ապստամբների հիմնական նպատակն անգլիացիներին դուրս մղելն էր և Հունաստանին միավորվելը: Կեֆալոնիայում բուժուական դեմոկրատներ, Հունաստանի անկախության համար պատերազմի մասնակիցներ իրավաբաններ Լիվադասի և Ֆոկասի գլխավորությամբ ստեղծվեց գաղտնի քաղաքական միություն, որը մերժում էր անգլիացիների հետ փոխզիջումների գնալու քաղաքականությունը: Միությունը 1848թ. ապրիլի 6-ին Կեֆալոնիայի կենտրոն Արգոստոլում ազգային տոնի օրը հանդես եկավ Հունաստանի հետ միավորվելու օգտին և ֆրանսիական հանրապետության պաշտպանությամբ:

Կորֆուում կայացած համաձայնությունն առաջ բերեց Կեֆալոնիայի հույների բուռն դժգոհությունը: Սկսվեցին նախապատրաստական աշխատանքներ անգլիացիների դեմ զինված ապստամբություն բարձրացնելու ուղղությամբ: Ապստամբները կապեր հաստատեցին Հունաստանի, Իտալիայի և Ֆրանսիայի հետ՝ ակնկալելով հատկապես վերջինի զինված օգնությունը: Շուտով ապստամբության նախապատրաստությունը գրեթե բացահայտ բնույթ կրեց, որի մասնակիցները հանդիսավոր երդում տվեցին պայքարել հայրենիքի ազատության համար: Ապստամբները ծրագրում էին գրավել իշխանությունը, ստեղծել ժամանակավոր կառավարություն, վերացնել պարտքերի պարտավորությունները և բանտերից ազատել պարտք ունեցողներին¹:

«Հայաստանը» Հոնիական կղզիներից ստացված լրատվությամբ մանրամասնություններ է պատմում Կեֆալոնիայում «պատահած խռովության» մասին: Ըստ այդ լուրերի՝ օգոստոսի 18-ի գիշերը Սքալա գյուղում հույները խռովություն բարձրացրին ու սպանեցին մի աստիճանավորի: Տեղեկանալով այս մասին՝ անգլիացիներն ապստամբ հույների դեմ հաջորդ օրը 50 զինված մարդ ուղարկեցին, բայց նրանք էլ սպանվեցին: Այս անգամ անգլիացիները նրանց դեմ 100 հոգիանոց զինված ջոկատ ուղարկեցին, որոնք ապստամբների դեմ թնդանոթներ կիրառեցին՝ ավերածություններ պատճառելով հույների բնակավայրերին: Դրանից հետո ապստամբների շարքերը սկսեցին ստվարանալ: Անգլիացիները ստիպված եղան լրացուցիչ զորքեր կանչել Կորֆուից, Զանթալից և Իթակայից: Սեպտեմբերի 2-ին Կեֆալոնիայի զորքերի ընդհանուր հրամանատարն սկսեց ձնշել ապստամբներին: Սեպտեմբերի 9-ին անգլիական զորքերին միացան նաև 700 հույներ և համատեղ ջանքերով պարտության մատնեցին ապստամբներին: «Հայաստանն» ընդգծում է, որ ապստամբությունը ձնշելիս սպանվեցին նաև մեծ թվով «անմեղ մարդիկ»²:

¹ Международные отношения на Балканах 1830-1856 гг., стр. 244; Революции 1848-1849, том II, стр. 377.

² «Հայաստան», 1849, 24 սեպտեմբերի:

Այս իրադարձություններին անդրադարձած «Եվրոպան» ապստամբության բռնկման այլ բացատրություն է տալիս: Թերթը չի կիսում հոնիական լրագրերի առաջ քաշած տեսակետն ապստամբության վերաբերյալ, որոնք «այս խռովությանը ուրիշ կերպարանք տալ կուզին»: Չներկայացնելով այդ լրագրերի տեսակետը՝ «Եվրոպան» գրում է, որ ամեն ինչ սկսվեց այն բանից հետո, երբ անգլիական գործակալը ցանկացավ Կեֆալոնիան «պաշարման վիճակի մեջ դնել»: Նա Հունաստանի կառավարությանն առաջարկեց պայմանագիր կնքել և պարտավորվել երկու կողմից փախչող ապստամբներին բռնել ու իրեն հանձնել: Հույները դրա դեմ վրդովեցին ու ապստամբություն բարձրացրին: Ապստամբությունը կարճ ժամանակամիջոցում ընդգրկեց Սանտա Մավրա, Իթակա, Պարոս և Զանթա կղզիները, որոնք նույնպես ընդվզեցին անգլիացիների դեմ: Ապստամբությունը գլխավորում են Մատաքսասը, Ռիպալտորը և ուրիշները, որոնց թվում նաև երկու քահանաներ:

«Եվրոպան» ընդգծում է, որ հույն ապստամբների կարգախոսն է՝ «Ազատություն ու Հունաստանի հետ միավորություն»¹: Անդրադառնալով ապստամբության հետագա ընթացքին՝ թերթը հայտնում է, որ Կեֆալոնիայում անգլիական կուսակալն սկզբնական շրջանում չկարողացավ ապստամբությունը ճնշել և քիչ մնաց սպանվել: Նա ապստամբների դեմ զորք հանեց, ճնշեց նրանց դիմադրությունը և յոթ հոգու մահապատժի ենթարկեց²:

Կեֆալոնիայում ապստամբությունը բռնկվեց նախատեսված ժամկետից շուտ: Սեպտեմբերի 26-ի վաղ առավոտյան ապստամբական երկու ջոկատներ շարժվեցին Արգոստոլի և Լուկտորի վրա: Ապստամբներն Արգոստոլի մատույցներում ընդհարվեցին անգլիական զինվորների հետ՝ տալով կորուստներ ու գերիներ: Ապստամբները կարճ ժամանակ գրավեցին Լուկտորը. կեսօրին Արգոստոլից եկած անգլիական զինվորները նրանց դուրս մղեցին քաղաքից: Երկու օր շարունակ տևած մարտերն ավարտվեցին ապստամբների ճնշմամբ: Անգլիացիները Կեֆալոնիայի բնակիչների վրա մեծ ռազմատուգանք դրեցին, որը զանձում էին բռնություններ կիրառելով: Նրանք շուտով ձերբակալված ապստամբներին ազատություն տվեցին: Զ. Սիթոնը, վերականգնելով իր լիբերալ քաղաքականությունը, ձգտում էր թուլացնել հույների ազգային-ազատագրական շարժումը: Նրան փոխարինած Հ. Ուորդը կրկին դիմեց բռնությունների, որը 1849 թ. օգոստոսին Կեֆալոնիայում հանգեցրեց ապստամբության: Այն ավելի համառ բնույթ կրեց և դաժանորեն ճնշվեց անգլիական զորքերի կողմից: Կղզու 200 հազար բնակիչներից 8 հազարին անգլիացիները կախեցին, բանտարկեցին և աքսորեցին³:

«Եվրոպան» իտալական «Օստերվատորե տրիեստինո» լրագրի 1849թ. սեպտեմբերի նյութերով պատմում է նաև Հոնիական կղզիների այս ապստամբության մասին, որը շնորհիվ անգլիական իշխանությունների «ազդու միջոցների» գրեթե ամբողջովին ճնշվել է: Ապստամբների մի փոքրիկ խումբ կարողացել է լեռներում ապաստան գտնել, բայց շրջապատվել է զորքի կողմից:

Անդրադառնալով ապստամբության բռնկման պատճառներին՝ թերթը գրում է, որ

¹ «Եվրոպա», 1848, 21 նոյեմբերի, թիվ 47, էջ 197:

² «Եվրոպա», 1849, 18 սեպտեմբերի, թիվ 38, էջ 159:

³ Международные отношения на Балканах 1830-1856 гг., стр. 243, Революции 1848-1849, том II, стр. 378.

ոմանց կարծիքով հույներն «անգլիացիների ծեռքեն ազատելու համար ոտք ելան, որովհետև անոնց պրոտեստորատից ծանծրացած էին»: «Եվրոպայի» կարծիքով ապստամբության պատճառն ուրիշ է. Հունաստանում գործում է գաղտնի մի ընկերություն, որի նպատակն է հեղափոխություն իրականացնել, որպեսզի «Հունաստանի սահմանադրական միապետությունը Ոթոն թագավորին իշխանությանը տակ մնալով Տաճկաստանի երկրներովը մեծնա»: Սրանից զատ մեկ այլ գաղտնի ընկերություն փորձում է Հունաստանում հանրապետություն հաստատել: Այս երկու ընկերությունները Հոնիական կղզիներում համախոհներ ունեն, որոնք մեծամասամբ Փարիզում կրթված և «հասարակական աղանդավորներուն գաղափարներովը տոգորված երիտասարդներ են»: Նրանք համախմբված են «Երիտասարդ Հոնիա» կազմակերպությունում և հեղափոխություն իրականացնելու նպատակով սկսեցին լրագրերում անգլիացիների նկատմամբ ատելություն քարոզել, աղքատներին հարուստների դեմ գրգռել և «ամեն բան հավասար բաժանելու գաղափարներ տարածել» հատկապես՝ Կեֆալոնիայում, որտեղ «ժողովրդի հոգին հունական է»:

Թերթն իրավացիորեն նկատում է, որ Հոնիական կղզիների հույների նպատակն է «ազգի զանազան մասերը իրարու հետ միացնել», ուստի՝ ապստամբեցին: «Բայց հայտնի է, որ այս գեղեցիկ ու ցանկալի միավորությունը միայն այն ատեն օգտակար ու հաստատուն կլինի, երբոր հարկավոր թություններով ու պատշաճ կերպով կկատարվի», - եզրակացնում է «Եվրոպան»¹:

Թերթն այնուհետև պատմում է, որ Հոնիական կղզիներում գործում է «Եղբայրություն» («Fratellanza») անունով գաղտնի ընկերություն, որի նպատակն է Հոնիական կղզիները միացնել Հունաստանի հետ ու «ուրիշ երկրներուն մեջ հեղափոխական շարժումնք հանել»: Ընկերության անդամներն իրենց կողմն են գրավել մեծ թվով ալբանացիների, որպեսզի նրանք օգնեն իրենց ապստամբությանը: Ընկերության ղեկավարները ձերբակալվել են, իսկ ալբանացիները՝ աքսորվել: Թերթի լրատվությամբ Կեֆալոնիայի ապստամբության ղեկավարներից Վլազգոն ու Պոմպոդին իրենց թաքցրած գյուղի բնակիչների կողմից հանձնվել են անգլիական իշխանություններին²:

Անգլիական իշխանությունները Կեֆալոնիայում բռնկված իշխանությունը դաժանորեն ճնշեցին, ինչն ընդգծում էին նաև եվրոպական որոշ լրագրեր: «Եվրոպան» վկայակոչում է Աուգսբուրգի լրագիրը, որը պատմում էր ապստամբության վախճանի և ապստամբների նկատմամբ իրականացված բռնությունների մասին: Ներկայացնելով այդ ամենը՝ լրագիրը եզրակացնում է, որ անգլիացիները Հոնիական կղզիներում «խիստ պատիժներ» են իրականացնում այնպիսի «խռովության» համար, «որն որ Եվրոպայի մեկալ տերությամբ մեջ եղած ամենամեծ ապստամբություններուն նայելով՝ խիստ փոքր է»: «Եվրոպան» չցանկանալով սեփական կարծիք հայտնել՝ հղում է անում նաև անգլիական «Էքսպրես» լրագրին, ըստ որի՝ Մեծ Բրիտանիան Հոնիական կղզիները «չունենար ավելի աղեկ կըլլար»: Թերթի կարծիքով՝ զուտ տնտեսական տեսանկյունից դա շահավետ չէ, քանի որ կղզիների 200 հազար բնակիչներից յուրաքանչյուր տարի հարկվող 200 հազար ֆունտ ստերլինգը մեծ գումար չէ³:

¹ «Եվրոպա», 1849, 25 սեպտեմբերի, թիվ 39, էջ 162:

² «Եվրոպա», 1849, 30 հոկտեմբերի, թիվ 44, էջ 183:

³ «Եվրոպա», 1849, 9 հոկտեմբերի, թիվ 41, էջ 170-171:

Եվրոպական լրագրերն անտեսում էին այն իրողությունը, որ դա չէր խանգարում անգլիական իշխանություններին ամենայն խստությամբ և դաժանությամբ ճնշել հույների յուրաքանչյուր ընդվզումը և կղզիները պահել իրենց հովանավորության տակ, որոնք ռազմավարական նշանակություն ունեին Միջերկրական ծովում: Պատահական չէ, որ, ինչպես հայտնում է «Եվրոպան», Անգլիայի Վիկտորյա թագուհին Հոնիական կղզիների կուսակալ Ուորդին, սենատի քարտուղարին ու Օրենսդիր ժողովի նախագահին ապստամբությունը «հաջողությամբ զսպելու համար» պարգևատրեց սուրբ Միքայելի և սուրբ Գեորգիի մեծ խաչով¹:

Հոնիական կղզիների ապստամբության ճնշումից մի քանի ամիս անց Մեծ Բրիտանիայի կառավարությունը Հունաստանի անկախ պետության նկատմամբ պատժողական քաղաքականություն իրականացրեց: Անգլիայի արտգործնախարար լորդ Պալմերսթոնը 1840-ական թթ. վերջերին Հունաստանի կառավարության դեմ հավաքել էր շուրջ 1100 տարբեր բողոքներ ու դժգոհություններ, որոնց հեղինակներն անգլոհայատակ հոնիական վաճառականներ ու ծովայիններ էին: Դրանցից մեկն էլ ծագումով պորտուգալական հրեա վաշխառու դոն Պաչիֆիկոն էր, որի տունը 1847 թ. ապրիլին Աթենքի խաժամուժը Զատկի օրը հրդեհել էր: Նրա գործը լսում էր հունական դատարանը՝ երկրի գործող օրենքների շրջանակում:

Հանդես գալով դոն Պաչիֆիկոյի պաշտպանությամբ՝ անգլիական 14 ռազմանավեր՝ ծովակալ Ուիլյամ Պարքերի հրամանատարությամբ 1850թ. հունվարի 16-ին խաբիսի գցեցին Պիրեայում: Հաջորդ օրը Ու. Պարքերը և անգլիական դեսպանորդ Թ. Ուայսը Հունաստանի կառավարությունից պահանջեցին 24 ժամվա ընթացքում բավարարել իրենց ունեցած բոլոր պահանջները: Օտտոն թագավորը հրաժարվեց կատարել նրանց պահանջը, և Թ. Ուայսը հայտարարեց Հունաստանի ժովափնյա շրջաններն ու նավահանգիստները շրջափակման ենթարկելու մասին²:

Այս իրադարձությունը լուսաբանող «Եվրոպան» անդրադառնում է Թ. Ուայսի՝ Կորֆուի սենատին հղած գրությանը և ներկայացնում դրա բովանդակությունը: Նրանում խոսվում էր անգլո-հունական հարբերությունների մասին և շեշտվում, որ Անգլիան կարող է իրեն իրավունք վերապահել գենքի ուժով պաշտպանելու իր հպատակների շահերը: Թ. Ուայսը նշում էր, որ Անգլիայի միջամտությունը չի սպառնում Հունաստանի ամբողջականությանը, բայց քանի որ Հունաստանը պնդում է, թե կղզիների խնդրի կարգավորումն իր գործն է, ուստի Անգլիայի դեսպանն ու նավատորմը ստիպված եղան «խիստ միջոցներու ծեռք զարնելու»³:

«Եվրոպան» չբացահայտելով եղելությունը և սեփական կարծիք չարտահայտելով Թ. Ուայսի գործողությունների մասին՝ բավարարվում է նշելով, որ Հունաստանի նկատմամբ լորդ Պալմերսթոնի վարած քաղաքականությունը նրա պաշտպան եվրոպական երկու պետությունների և անգլիացիների «մեկ մասին շատ անհաճո է»: Բոլորովին այլ դիրքորոշում ուներ անգլիական «Թայմս» թերթը, որը, պաշտպանելով կառավարության քաղաքականությունը, ջանում էր ապացուցել Անգլիայի իրավացիությունը: «Եվրոպան» թարգմանաբար ամբողջությամբ տպագրում է «Թայմսի» մարտի 9-ի

¹ «Եվրոպա», 1849, 30 հոկտեմբերի, թիվ 44, էջ 183:

² Международные отношения на Балканах 1830-1856 гг., с. 245.

³ «Եվրոպա», 1850, 26 փետրվարի, թիվ 9, էջ 34:

հոդվածը, որը պատմում էր Հունաստանի շրջափակման հետևանքով Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև հարաբերությունների որոշակի լարվածության մասին ու արդարացնում էր Անգլիայի քաղաքականությունը՝ «բոլորովին սուտ ու անհիմն» համարելով պաշտոնական Լոնդոնի հասցեին հնչած մեղադրանքները: «Եվրոպան» միաժամանակ տեղեկացնում է, որ, ֆրանսիական կառավարության միջնորդությունը հարգելով, Ռուսիայի ժամանակավորապես վերացրել է հունական նավահանգիստների շրջափակումը¹:

Թերթի լրատվությունը հավաստի է այնքանով, որ Ռուսաստանը և Ֆրանսիան հանդես եկան Հունաստանի նկատմամբ Անգլիայի գործողությունների դեմ: Ռուսաստանը 1850 թ. փետրվարի 19-ին Անգլիայում իր դեսպան Ֆ. Բրունովին հստակ զգուշացրեց, որ նա բրիտանական կառավարությունից պահանջի վերացնել Հունաստանի շրջափակումը: Բարոյական աջակցությունից զատ Ռուսաստանը չկարողացավ ոչնչով օգնել Հունաստանին, քանի որ իր նավատորմը փակված էր Սև ծովում: Հունաստանի կառավարությունն, այլ ելք չտեսնելով, 1850 թ. ապրիլի կեսերին ընդունեց Անգլիայի վերջնագիրը, որից հետո Ռուսիայի Պարբերական մայիսի 4-ին վերացրեց շրջափակումը: Ֆրանսիայի միջամտության շնորհիվ դոն Պաշիֆիկոյին վճարվելիք փոխհատուցումը կրճատվեց 10 անգամ: Լորդ Պալմերստոնը հասավ իր նպատակին և Հունաստանին իր ուզած «դասը տվեց»: Անգլիայի համայնքների պալատը հունիսի 25-ի նիստում հավանություն տվեց նրա վարքագծին²:

Եզրակացություն

Հունական ազգային-ազատագրական շարժումը պարտություն կրեց, որին ծանր հարված հասցրին Մեծ Բրիտանիան և Օսմանյան կայսրությունը: Հույները պարտություն կրեցին ամենից առաջ այն պատճառով, որ 1848-1850 թթ. ապստամբական պայքարը մեծ թափ չստացավ ու խիստ սահմանափակ տարածք ընդգրկեց: Միաժամանակ նրանց պայքարն աջակցություն չգտավ եվրոպական պետություններում, այդ թվում՝ Ֆրանսիական հանրապետությունում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Արշալույս արարտյան», 1848, 14 մայիսի, թիվ 311, 25 հունիսի, թիվ 314, 6 օգոստոսի, թիվ 317, 17 սեպտեմբերի, թիվ 320:
2. «Արշալույս արարտյան», 1849, 4 մարտի, թիվ 332:
3. «Արշալույս արարտյան», 1878, թիվ 1093:
4. «Եվրոպա», 1848, 27 հունիսի, թիվ 26, էջ 112, 21 նոյեմբերի, թիվ 47, էջ 197:
5. «Եվրոպա», 1849, 20 մարտի, թիվ 12, էջ 47, 18 սեպտեմբերի, թիվ 38, էջ 159, 25 սեպտեմբերի, թիվ 39, էջ 162, 30 հոկտեմբերի, թիվ 44, էջ 183:
6. «Եվրոպա», 1850, 26 փետրվարի, թիվ 9, էջ 34, 19 մարտի, թիվ 12, էջ 46-47, 21 մայիսի, թիվ 21, էջ 82:
7. «Հայաստան», 1848, 27 մարտի:
8. «Հայաստան», 1849, 19 մարտի, 13 օգոստոսի, 24 սեպտեմբերի:

¹ «Եվրոպա», 1850, 19 մարտի, թիվ 12, էջ 46-47:

² Международные отношения на Балканах 1830-1856гг., стр. 246-247.

9. Адрианопольский мирный договор 1829. Военная энциклопедия, т. 1, М., 1997, 639 с.
10. История XIX века. Под ред. Лависса и Рамбо, т. 5, М., 1938, 416 с.
11. Международные отношения на Балканах 1830-1856 гг., Отв. Ред. В. Н. Виноградов, М., 1990, 349 стр.
12. Мисюревич О. Е. Становление национального государства в Греции: «русская партия» в 1837-1844., М.: 1977, 44 с.
13. Революции 1848-1849, Под ред. Б. А. Потемкина и А. Л. Молока, М., 1952, том II, 644 с.
14. Советская историческая энциклопедия, т. 1, М., 1961, 1024 с.
15. Шпаро О. Б. Освобождение Греции и Россия, М. 1965, 280 с.

REFERENCES

1. «Arshaluys Araratyan», 1848, 14 mais, tiv 311, 1848, 25 hunis, tiv 314, 1848, 6 ogostos, tiv 317, 17 september, tiv 320. (in Armenian)
2. «Arshaluys Araratyan», 1849, 4 mart, tiv 332.(in Armenian)
3. «Arshaluys Araratyan», 1878, tiv 1093. (in Armenian)
4. «Evropa», 1848, 27 hunis, tiv 26, ej 112, 21 noyember, tiv 47, ej 197. (in Armenian)
5. «Evropa», 1849, 20 marti , tiv 12, ej 47, 18 september, tiv 38, ej 159, 25 september, tiv 39, ej 162, 30 hoktember, tiv 44, ej 183: (in Armenian)
6. «Evropa», 1850, 26 petrvar, tiv 9, ej 34, 19 mart, tiv 12, ej 46-47, 21 mayis, tiv 21, ej 82: (in Armenian)
7. «Hayastan», 1848, 27 marti, 19 marti, 13 ogostosi, 24 septemberi.(in Armenian)
8. Adrianapolski mirni dogovor 1829. Voennaya enciklopedia, t. 1, М., 1997. (in Russian)
9. Voennaja enciklopedia. Tom 1, Moskva, 1997, 639 s. (in Russian)
10. Istoriya XIX veka. Pod red. Lavissa i Rambo, t. 5, М., 1938. (in Russian)
11. Mejdunarodnie otnosheniya na Balkanax 1830-1856 gg., Otв. Red. V. N. Vinogradov, М., 1990.(in Russian)
12. Misyurevich O. E. Stanovlennje nacionalnovo gosudarstva w Grecii; «russkaya partiya» v 1837-1844., М., 1977.
13. Revolyucii 1848-1849. Pod red. B. A. Potemkina i A. L. Moloka, М., 1952, том II. (in Russian)
14. Sovetskaya istoricheskaya enciklopediya, t. 1, М., 1961. (in Russian)
15. Shparo O. B. Osvobojdienie Grecii i Rossiya, М., 1965, 280 s.(in Russian)

РЕЗЮМЕ

Отражение греческой национально-освободительной борьбы 1848-1850-х гг. в западноармянской периодической печати

Феликс Мовсисян

*д.и.н., профессор, зав. кафедрой истории ВГУ
Ванадзор, Республика Армения*

Ключевые слова: греки, национальная борьба, независимость, Великая Греция, армянская пресса, «Айастан» («Армения»), «Аршалуйс Араратян» («Заря Араратская»), «Европа»

В результате греческой национально-освободительной борьбы 1821-1829 гг. греки обрели независимость. Благодаря содействию европейских держав, было образовано Королевство Греция, в состав которого вошла лишь одна треть исторических греческих территорий. Несмотря на это, греки не прекратили национальное движение за создание единой свободной и независимой родины. В 1840-х гг. в среде греков достаточно распространенной была идея «Великой Греции», для осуществления которой боролись патриотические и тайные организации. В 1848 году под влиянием победы февральской Французской революции греки подняли восстание, которое нашло заметное отражение в армянской периодической печати. К греческой борьбе обратились, в основном, издания национально-консервативного течения армянской общественной мысли.

Официальный орган Константинопольского Армянского Патриархата – газета «Айастан» («Армения») и газета армян Смирны «Аршалуйс Араратян» («Заря Араратская») в условиях турецкой цензуры не могли свободно и непредвзято освещать греческую освободительную борьбу, которая велась против Османской империи. Эти издания представляли греческое национальное движение с протурецких позиций. Газета «Айастан» считала эту борьбу «спором» между Грецией и Турцией, а призывы к борьбе, звучащие в греческом парламенте, «беззаконием и глупостью». По мнению газеты, греки «глупцы», потому что не думают о тяжелых последствиях войны. Редакция газеты предлагает прежде всего задуматься о благосостоянии страны.

Газета «Аршалуйс Араратян» именует Грецию «несчастной страной», в которой царят междоусобица и раздор, в результате чего греки не прогрессируют и их положение с каждым днем ухудшается.

Еженедельная газета конгрегации Венских Мхитаристов «Европа» греческую борьбу представляла, в основном, с беспристрастных позиций. Газета подчеркивает, что хотя девизом греческих повстанцев является «Свобода и единение с Грецией», но тем не менее, она не приветствует их борьбу.

SUMMARY

The Reaction of the Western-Armenian Periodical Press to the 1848-1850 Greek National Liberation Struggle

Felix Movsisyan

*VSU, Head of the Chair of History, Ph.D. in History, Professor
Vanadzor, the Republic of Armenia*

Key words: Greeks, national struggle, independence, Greater Greece, Armenian press, the "Armenia", the "Arshaluys Araratyan", the "Europe"

As a result of the 1821-1829 Greek national liberation struggle, the Greeks gained independence. With the support of the great European powers, the Kingdom of Greece was created, which covered only one third of the Greek historical territory. Nevertheless, the Greeks did not stop the national movement for a united, free and independent homeland. In the 1840s, the idea of a "Greater Greece" was quite viable among the Greeks, for the implementation of which patriotic and secret societies struggled. Under the influence of the victory of the French Revolution in February 1848, the Greeks revolted, which was noticeable in the Armenian periodical press of the time. The struggle of the Greeks was mainly covered by the national-conservative currents of the Armenian public thought.

The official newspaper of the Armenian Patriarchate of Constantinople the "Hayastan" and the Smyrna-Armenian "Arshaluys Araratyan" do not freely refer to the Greek liberation struggle against the Ottoman Empire. These periodicals represent the Greek national movement from a pro-Turkish position. The "Armenia" considers it as a "dispute" between Greece and Turkey, and the calls for struggle in the Greek parliament - "injustice - stupidity." According to the newspaper, the Greeks are "stupid" because they do not think about the severe consequences of the war, and advises to think about enriching the country.

The "Arshaluys Araratyan" calls Greece an "unfortunate country" where there is division and disunity, due to which the Greeks do not progress, their situation is deteriorating day by day.

The weekly "Europe" of the Mekhitarist Congregation in Vienna presents the Greek struggle mainly from an impartial position. The newspaper emphasizes that the slogan of the Greek rebels is "Freedom - unification with Greece", but does not praise their struggle.